«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 7-ի N 384-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« »_____2026 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-Ի N 384-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության մասին» N 384-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետում «ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած» բառերը փոխարինել «հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողները կամ զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած)» բառերով, իսկ «տարածությամբ» բառից հետո լրացնել «(բացառությամբ սույն կարգի 12.1-ին կետով սահմանված անձանց)» բառերը.

2) կարգի 12-րդ կետում՝

ա. «ունեցող են» բառերից հետո լրացնել «(բացառությամբ սույն կարգի 12.1-ին կետով սահմանված անձանց)» բառերը,

բ. 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«3) ունի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք կամ զոհվել (մահացել) է զինվորական ծառայության ընթացքում.».

3) կարգի 12-րդ կետից հետո լրացնել 12.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12.1. Սույն կարգի 12-րդ կետով սահմանված բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու պայմանը չի տարածվում ծառայողական պարտականությունները կատարելիս կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործո ղություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամների վրա, որոնց անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված բնակելի տարածությունն անհատույց սեփակա նության իրավունքով տրամադրվում է անկախ բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր հաշվառված լինելու և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու հանգամանքներից:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետի՝

1) 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված փոփոխությունների գործողությունը տարածվում է նաև մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա.

2) 3-րդ ենթակետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 7-ի N 384-Ն որոշման հավելվածի 12.1-ին կետի գործողությունը տարածվում է միայն մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն անհատույց օգտագործման իրավունքով ծառայողական բնակարան
ստացած և ծառայողական պարտականությունները կատարելիս կամ Հայաստանի
Հանրապետության պաշտպանության մարտական գործո ղություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների վրա:

Հայաստանի Հանրապետության վարչապետ Ն. Փաշինյան

ք. Երևան 2026թ.